ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2028 - Ա **06 ապրիլի 2009թ.**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի Հ. 6120-Ա, 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի Հ.388-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով, հաշվի առնելով «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի 10.03.2009թ. հ.20-Ել-1664, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2008 թվականի դեկտեմբերի 19-ի «Երևանի քաղաքապետի 2004 թվականի ապրիլի 9-ի հ.562-Ա որոշման 1-ին հավելվածը չեղյալ ճանաչելու, Ազատության պողոտայի նրբանցքի հ.5/1 բնակելի տան նկատմամբ Գառնիկ Հարությունի Խաչերյանի գույքային իրավունքները վերականգնելու, 77.84քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.6120-Ա որոշման վերնագրում և 3-րդ կետում «77.84» թիվը փոխարինել «42.92» թվով նախաբանի առաջին պարբերությունում «377.84» թիվը փոխարինել «342.92» թվով, «77.84» թիվը փոխարինել «42.92» թվով, 2-րդ կետում «377.84» թիվը փոխարինել «342.92» թվով, «սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի» բառերից հետո լրացնել «(որից 1.22քմ մակերեսով հողամասն ընդհանուր սեփականություն է Սիմոն Խաչատրյանի հետ)» բառերը:

2. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հունվարի 27-ի «Ազատության պողոտայի նրբանցքի հ.5/9 բնակելի տան նկատմամբ Սիմոն Հարությունի Խաչատրյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.388-Ա որոշման 1-ին կետում «273.88» թիվը փոխարինել «277.93» թվով, «26.5» թիվը փոխարինել «22.61» թվով, որից հետո լրացնել «և 1.22քմ մակերեսով հողամասն» բառերը և թվերը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի.

1) իրավաբանական վարչության պետին՝ քաղաքացի Գառնիկ Խաչերյանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված որոշման հիման վրա կնքված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր.

2) ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ քաղաքացի Գառնիկ Խաչերյանին վերադարձնել սույն որոշման առաջին կետում նշված որոշման հիման վրա կնքված պայմանագրով վճարված գումարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**